ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 ապրիլի 2019թվականի թիվ 116-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետով՝

կարգադրում եմ.

1.ՀՀ Տավուշի մարզում ներդրումային ծրագրերին աջակցելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Խմբի ղեկավար՝

Գ.Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ

Անդամներ՝

Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,

Ա.Նազարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ,

Գ. Մելիքբեկյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ,

Ժ.Խաչատրյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ,

Մ.Թամամյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի փորձագետ,

Ա.Պողոսյան – Անկախ փորձագետ /համաձայնությամբ/

2.Աշխատանքային խմբին՝ անհրաժեշտ համակողմանի աջակցություն ապահովել մարզի տարածքում պետական աջակցության, մասնավոր նախաձեռնության նախատեսվող ներդրումային ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով:
3.Պետական աջակցության ծրագրերից օգտվել ցանկացող քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություններ, անհրաժեշտության դեպքերում ներառելով փարձագետերի:
4.Նախաձեռնությունները իրականացնելու նպատակով մասնավոր ներդրումներ պլանավորող քաղաքացիների համար ապահովել իրավական, ֆինանսական, մասնագիտական և այլ անհրաժեշտ խորհրդատվություններ:
5.Ապահովել գործուն կապ նախաձեռնություն ցուցաբերած ներդրողների և համապատասխան կառույցների միջև:
6.ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժնին՝ ապահովել տեղեկատվության հանրայնացումը թեժ գծի, էլեկտրոնային տեղեկատվության միջոցների, զլմ-ների և այլ հնարավոր մեթոդների ու ձևերի կիրառման օգնությամբ:
7.Խմբի ղեկավարին՝ 15-օրյա պարբերականությամբ տեղեկատվություն տրամադրել Տավուշի մարզպետին խմբի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ:
8.Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ խմբի աշխատանքների իրականացման համար:

ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ՝ Թ.Ստեփանյան